

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԱՓԻՈՆ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (այսուհետ՝ ՄԻՀՀ), մեր ժամանակի ամենահայտնի և ամենամեջբերվող փաստաթղթերից է: Օրինակ, ըստ Գուգլ որոնիչի «մարդու իրավունքներ» բառակապակցությունը (անգլերեն) հիշատակվում է ավելի հաճախ, քան Բիբլիա և Իսլամ բառերը միասին վերցված (229 000 000, 119 000 000, 91 100 000 անգամ՝ համապատասխանաբար): Սովորաբար կարծում են, թե մարդու իրավունքները սկսել են դիտարկվել միայն վերջերս՝ Ֆրանսական հեղափոխությունից հետո: Իրականում յուրաքանչյուր կրոն, հատկապես՝ պետական կարգավիճակի հասած, ներառյալ աստվածամերժ կրոնները, ինչպիսիք են ներկայումս աշխարհում գերակշռող դեմոկրատիան և կոմունիզմը, այսպես, թե այնպես անդրադաձել են մարդու իրավունքների հարցին: Պարզապես, նախորդ կրոններում մարդու իրավունքներին վերաբերող դրույթները ցրված էին պաշտոնական տարբեր գրքերի էջերում, և միայն դեմոկրատիայի շրջանակներում էր, որ առաջին անգամ մարդու իրավունքները ձևակերպվեցին, որպես առանձին փաստաթուղթ, որը դարձավ նոր կրոնի սուրբ գիրքը և նոր իրավաբանության հիմքը:

Շնորհիվ դրա նոր գաղափարախոսությունը, որը գալիս էր փոխարինելու նոր ժամանակների իրողություններից հետ մնացած քրիստոնեությանը, ունեցավ վերջինի համեմատ շատ ավելի պարզ ձևակերպված շարադրանք: Առհասարակ, յուրաքանչյուր կրոն, կոչված է առաջարկել բացատրությունների համարկարգ մարդուն հուզող մի շարք կարելորագույն հարցերի վերաբերյալ: Դրանք են, աշխարհի ստեղծումը, կյանքի իմաստը, անհատի տեղը հասարակության մեջ: Այս վերջին հարցերը դասական քրիստոնեության շրջանակներում բավական մշուշոտ էին, շարադրված: Ինչն էլ որ պարզ էր՝ սփոփիչ չէր, քանի որ անհատին տրված էր հասարակության կողմից խիստ նսեմացված կարգավիճակ և նրան մնում էր միայն անդրջիրիմյան դրախտային կյանքի հույսը: Այն էլ՝ ոչ երաշխավորված: Եւ բնական է, որ գաղափարախոսությունը, որը կխոստանար դրախտ՝ անհատի կյանքի օրոք, պիտի որ չափազանց գրավիչ թվար:

Բայց ոչինչ նոր չէ աշխարհում: Հազարամյակներ շարունակ տարբեր իրավաբանական համակարգերում հայտնի դրույթները Ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսները հավաքեցին մեկ փաստաթղթի մեջ, և տվեցին նրան մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի հավակնոտ անվանումը: Հետագայում ընդունվեցին ևս մի շարք նման փաստաթղթեր, և դրանցից ամենակարևորը. ՄԱԿ-ի ընդունածը, որի մասին էլ ստորև կխոսենք:

Ինչպես ասվեց, բոլորովին նոր բան դեմոկրատային չէր կարող հորինել: Այն էլ, ինչ նոր էր, այս փաստաթղթում՝ մեղմ ասած կասկածելի էր, բայց առանց դրա մարդու իրավունքները չէին կարող սորբ գրքի կարգավիճակի հասնել: Եւ նորն այդ լիովին ամփոփված է առաջին իսկ հոդվածում. հռչակագրի գրեթե բոլոր մյուս հոդվածները ածանցյալ են այս մեկից:

Հոդված 1. *Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով: Նրանք ունեն բանականություն ու խիղճ և միմյանց պետք է եղբայրաբար վերաբերվեն:*

Սկսենք վերջից. «*միմյանց պետք է եղբայրաբար վերաբերվեն*»: Սա իրոք մի պնդում է, որը լիովին արդարացնում է փաստաթղթի ժանրը. հռչակագիր: Թող վերաբերվեն եղբայրաբար. ո՞վ է դեմ: Բայց որպեսզի մարդիկ իրար վերաբերվեն եղբայրաբար, նրանք պիտի *խիղճ* ունենան: Հեղինակները դա հասկացել են, և դրա համար էլ նախորդ բառը հենց *խիղճ* է: Բայց սա նույնիսկ հռչակագրային էլ չի. սա պնդում է: Բայց հարց է առաջանում. իսկ արդյո՞ք մարդիկ խիղճ ունեն: Ոմանք, անկասկած, ունեն, իսկ ոմանք էլ (կարծում եմ բոլորը կհամաձայնվեն, որ նմանները նույնպես կան)՝ ոչ: Մի սովոր մասն էլ, որին, մեծ հավանականությամբ պատկանում են Ե՛ւ տողերիս հեղինակը, Ե՛ւ ընթերցողների զգալի մասը, իրենց խղճի քանակի մասին հազիվ թե որոշակի մի բան կարողանա ասել: Իսկ ի՞նչ է դրանից հետեւում: Շատ պարզ բան. որ հռչակագրի առաջին իսկ հոդվածի պնդումները և ցանկությունները շատ հեռու են իրականությունից:

Բայց սրանք դեռ ոչինչ: Խիղճ ունենալու մասին պնդմանը նախորդում է մարդականց մոտ *բանականության* առկայության մասին պնդումը: Սա արդեն լուրջ է: Բանականությունը այն է, ինչը մարդուն տարբերում է այլ առարկաներից և, նույնիսկ, կենդանի արարածներից: Այսինքն ասել, թե «մարդն ունի բանականություն» նույնն է, թե ասել. «մարդը՝ մարդ է»: Պետք է ենթադրել, որ ասելով *բանականություն* հեղինակները նկատի են ունեցել *խոհեմություն, ներողամտություն* կամ նման մեկ այլ իմաստ, այլապես մեր առջեւ բացարձակապես որեւէ արժեք չունեցող արտահայտություն է: Սակայն այս իմաստն էլ նույնանում է *խիղճ* իմաստին, և կրկին ստանում ենք անարժեք նույնաբանություն: Այսպիսով առաջին հոդվածի ամբողջ երկրորդ մասը անիմաստ բառակապակցություն է:

Անցնենք առաջին նախադասությանը. «*Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով*»: Իսկապե՞ս դա այդպես է: Մարդիկ ծնվում են ազա՞տ: Ազատ ինչի՞ց:

Եթե խոսքը վերաբերում է նրան, թե ի՞նչ հասարակական դիրք է գրավում նորածինը, ապա այն լիովին պայմանավորված է իր ծնողների հասարակական դիրքով: Բայց *«հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով:»* արտահայտությունը պարզապես սուտ է: Դա բոլորովին հակասում է իրականությանը, քանի որ, ճիշտ հակառակը (եւ համոզվելու համար յուրաքանչյուրին բավական է ըդամենը հիշել իր հեռու եւ մոտիկ ծանոթներին եւ ազգականներին) *մարդիկ ծնվում են իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով* **անհավասար**: Մարդիկ անվասար են իրենց հասակով, գեղեցկությամբ, առողջությամբ, խելքով, ծնողների հասարակական դիրքով (տե՛ս վերեւում) եւ այլն: Եւ, որպես հետեւանք, այո, իրավունքներով: Չի կարող մարդը, որը ծնվել է հարուստ ընտանիքում, ունենա նույն իրավունքները, ինչ ախքատ ընտանիքում ծնվածը: *Իրավունք ունի՞*՞ ախքատ նորածինը, օրինակ, պարկել նույն արժեքի օրորոցում, ինչ իր հարուստ հասակակիցը: Ո՛չ իհարկե, քանի որ նրա ծնողը ելնելով ընտանեկան բյուջեի հնարավորությունից չի կարող իրեն *իրավունք վերապահել* ձեռք բերել կամ նույնիսկ երազել նման օրորոց: Ինչ վերաբերում է *արժանապատվությանը*, ապա դա *խիղճ* հասկացության գույգն է. խիղճը կարգավորում է մարդու վերաբերմունքը այլ անձանց հետ, իսկ արժանապատվությունը կարգավորում է մարդու ակնկալիքն այն մասին թե ինչպես պիտի այլ անձինք վերաբերեն իրեն: Այդ երկու հատկությունների՝ խղճի եւ արժանապատվության հարաբերության մասին կարելի է առանձին եւ շատ երկար խոսել: Պարզ է մի բան, որ, ինչպես եւ խիղճը, արժանապատվությամբ էլ մարդիկ օժտված են տարբեր չափերով. մեկի համար արժանապատվությունից ցածր է միտքն անգամ, որ ինքը կարող է ենթարկվել ուրիշին, մյուսի համար, ինչպես ասում են, երեսին թթես, կասի անձրեւ է գալիս: Ել ի՞նչ հավասար արժանապատվությունների մասին է խոսքը:

Կարող են ասել, թե մեր առջեւ հռչակագիր է: Այդ դեպքում ինչո՞ւ չավելացնել մի քանի ոչ պակաս ցանկալի պնդում եւս, օրինակ. *մարդիկ անմահ են եւ ամենազոր, օժտված են սավառնելու եւ անտեսանելի դառնալու ունակությամբ*: Իսկ մյուս կողմից, այդ դեպքում ինչո՞ւ է կիրառված նախադասությունների հաստատական ձեւը: Ինչո՞ւ չի գրված գոնե այսպես. *«Բոլոր մարդիկ պիտի ծնվեն ազատ ու հավասար...»* եւ այլն: Պարզ է ինչու: Այդ դեպքում սրանք կլինեն սոսկ բարի գանկություններ եւ չէին ունենա ամբողջական ուժ: Ի՞նչ լավ կլիներ, եթե մարդիկ ծնվեին ազա՛տ, հավասա՛ր, լինեին խղճո՛վ... Ի՞նչ լավ կլիներ: Ոչ, փաստաթղթի հեղինակները պնդո՛ւմ են, որ մարդիկ հավասար են ծնվում: Պնդում են, եւ... ստում:

Բայց ինչո՞ւ է դա ընդունվում: Ինչպե՞ս կարող է ընդունվել մի բան, որը բոլորովին չի բխում յուրաքանչյուրի անձնական փորձից եւ առողջ տրամաբանությունից: Հենց այն նույն պատճառով, որով քրիստոնյաները հավատում են երկնային արքայությանը, բուդդայականները՝ նիրվանային, իսկ կոմունիստները՝ կոմունիզմին. այդպես հաճելի է: Դա մի երազ է, հույս է, թմբիր է, առանց որի մարդկանց մեծ մասը չի կարող ապրել. *կրոնը՝ ժողովրդի ափիոնն է*, ինչպես պնդում էր գործի լավ գիտակ Կարլ Մարքսը:

Գրականության մեջ կարելի է կարդալ ափիոնի ազդեցության եղանակը. այն կապանում է նյարդային համակարգի ցավի ըդունիչները: Իսկ ո՞րն է ա՛յս թմբադեղի ազդեցության եղանակը: Մարդիկ, ինչպես նկատեցինք, տարբեր են ծնվում իրենց մի շարք հատկությունների՝ գեղեցկության, տաղանդի, հարստության եւ այլն: Ցանկացած մարդ կարող է այս կամ այն աստիճանի անաչառությամբ գնահատել իր այդ հատկությունները: Եւ անելով դա, հաճախ նկատում է, որ ըստ այդ հատկությունների շրջապատող այլ անձանց համեմատ գտնվում է ոչ շահեկան դիրքում. ոչ այնքան գեղեցիկ է, ոչ այնքան տաղանդավոր, ոչ այնքան ունեւոր, ոչ այնքան առողջ եւ այլն: Եթե այդ փաստը նկատած անձն ունի գոնե խոհեմություն (հռչակագրի բառերով ասած՝ բանականություն), նա կարող է հաշտվել այդ ստեղծված իրադրության հետ, փորձելով քաղել առավելագույնը: Սակայն եթե չկա նաեւ խոհեմություն (իսկ եթե չկան նախորդ հատկությունները, ապա ի՞նչ երաշխիք, որ կլինի գոնե այս մեկը), ապա նա չի հաշտվի իրողության հետ: Այն իրեն մշտական ցավ կպատճառի. հոգեկան, բայց միեւնույն է՝ ցավ, դարձնելով նրան անկառավարելի: Սակայն եթե լինի մի միջոց՝ նույն այդ ափիոնը (մորֆինը, հերոյինը, կոկայինը եւ այլն), ապա ընդունելով այն, նա իրեն կզգա ե՛ւ գեղեցիկ, ե՛ւ ուժեղ, ե՛ւ հաջողակ: Մի խոսքով, պաշտպանված եւ ապահով: Սակայն կա եւ այլ միջոց. նրան կարելի է *հայտարարել*, որ շրջապատն ընդունում է, թե նա գեղեցիկ է, ուժեղ եւ հաջողակ, եւ եթե դա կրկնեն շատերը, մեծամասնությունը, նա կարող է եւ հավատալ դրան (հատկապես, որ ինչպես հիշում ենք, մտավոր օժտվածությամբ նա չի տառապում): Ահա եւ ամենը: Ստացանք նույն արդյունքը, ինչ՝ ափիոնի դեպքում, եւս մեկ անգամ հաստատելով Մարքսի իրավագիտությունը: Իսկ ի՞նչ է անում Մարդու իրավունքների հռչակագիրը: Հենց դա՛ էլ անում է, պնդելով որ բոլորն ունեն հավասար իրավունքներ եւ այլ հատկանիշներ:

Իսկ հռչակագրի մյուս դրույթները ոչ մի նորույթ չեն պարունակում: Համեմատենք դրա դրույթները օրինակ, հայտնի *Խամմուրայի* թագավորի (մ. թ. ա. 18 դար) օրենքների հետ: Այսպես, ամուսնության մասին ՄԻՀՀ-ի հոդված 16-ի 2-րդ կետում ասված է. *«Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում»*: Թվում է՝ նորություն է. կնոջ եւ տղամարդու քաղաքա-

կիրթ հարաբերությունների դրսևորում, մարդկության բանականության հազարամյա զարգացման արգասիք, որին այն կարողացել է հանել միայն 20-րդ դարում: Սակայն համեմատենք այն համամուրապիի օրենքների 128-րդ պարբերության հետ. *«Եթե մարդը կին է առել եւ պայմանագիր չի կնքել նրա հետ, ապա նա իր կինը չէ»:* Ինչպես տեսնում ենք, ըստ էության երկու դրուժները նույնիմաստ են, աննշան տարբերությամբ, որն էլ, ի դեպ, ՄԻՅՅ-ի օգտին չէ. եթե համամուրապիի օրենքը պարզորոշ պահանջում է, որ կնքվի պայմանագիր, ապա ՄԻՅՅ-ի հոդվածում դա մնում է անորոշ, եւ պարզ չէ, թե ի՞նչ եղանակով պիտի արտահայտվի *կողմերի լիարժեք եւ ազատ համաձայնությունը:*

Որպես եւս մեկ օրինակ դիտարկենք այսպես կոչված «անմեղության կանխավարկածը», որը դեմոկրատ քարոզիչները համարում են մարդու իրավունքների հիմքը եւ 20-րդ դարի մեծագույն նվաճումը: ՄԻՅՅ-ի հոդված 11-ի կետ 1-ը. *«Յանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անմեղ համարվել քանի դեռ նրա մեղքը չի ապացուցված օրենքով նախատեսված հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ կապահովվեն նրա պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները»:* Սակայն համամուրապիի օրենքների 3 պարբերությունում կարդում ենք. *«Եթե մարդը հանդես է եկել դատարանում հանցագործության մասին վկայությամբ, եւ խոսքն իր ասած չի ապացուցել, իսկ գործն այդ՝ կյանքի գործ է, ապա մարդն այդ պիտի սպանվի»:* Ինչպես տեսնում ենք, եւ ա՛յս դեպքում համամուրապիի օրենսգրքում կա համարժեք հոդված: Եւ կրկին կան եւ տարբերություններ, եւ կրկին ոչ հօգուտ ՄԻՅՅ-ի: Վերջինիս շարադրանքից պարզ չէ, թե ո՞վ պիտի ապացուցի մեղադրվողի անմեղությունը, եւ ի՞նչ է հասնում մեղադրողին (տվյալ դեպքում արդեն՝ զրպարտողին), եթե նրա մնդումը չի ապացուցվել, մինչդեռ համամուրապիի դեպքում ամեն ինչ չափազանց որոշակի է. մեղադրանքը պիտի ապացուցի ի՞նքը մեղադրողը, եւ եթե նա չկարողանա դա անել, նա կսպանվի:

Յամեմատական այս օրինակների շարադրանքի նպատակը երկու համակարգերի վերլուծությունը չէ, որն անհնար է առանց երկու կոթողների ստեղծման պատմական պայմանների եւ իրողությունների ուսումնասիրության, այլ ինքը փաստը, որ դեռեւս 4 հազար տարի առաջ դիտարկվել են այն նույն հարցերը, որոնց նվիրված է ՄԻՅՅ-ը: Իսկ թե ո՞րն է ավելի ճիշտ, սա այլ հարց է:

Զննադատելով ՄԻՅՅ-ը եւ բնավ չեմ ուզում ժխտել դրա դրական կողմերը, եւ հատկապես, դրանցից ամենակարեւորը. գոյության փաստը: Իրոք որ մարդու իրավունքների առանձնացումը, որպես առանձին փաստաթուղթ անհրաժեշտ էր: Այլ ինդիր է դրա բովանդակությունը: Վերջերս Ռուս ուղղափառ եկեղեցին հանդես եկավ Մարդու իրավունքների նոր շարադրմամբ՝ իր դիրքերից, որի հրապարակումը դեմոկրատ քարոզիչների անթաքույց անհանգստությունն առաջարցրեց: Մի կողմ թողնելով այդ փաստաթղթի դրույթների տրամաբանական եւ այլ քննությունը, պետք է արձանագրել, որ ՄԻՅՅ-ի դրույթների վերանայման անհրաժեշտությունը արդեն շրջում է օդում, եւ պետք է սպասել նման նոր փորձերի եւս:

Բայց ինչպիսին էլ լինեն այդ դրույթները, դրանք պիտի բխեն իրականությունից, այլապես կրկին կհայտնվեն հերոյինի եւ կոկայինի հետ մեկ շարքում: Մարդու իրավունքները, որպես արդար իրավաբանության հիմք պիտի ելնեն անժխտելի փաստից. ***մարդիկ ծնվում են անհավասար՝ բոլոր առումներով:***

Միայն գիտացելով եւ ընդունելով այս փաստը կարելի է մտացել այն մասին, թե ինչպիսի՞ միջոցառումներ են անհրաժեշտ մեղմելու համար այդ անհավասարությունը եւ թեթեթեւացնելու համար այն ցավը, որը նա ծնում է:

Ռուբեն Թարումյան
28.04.2006